

նից կաթողիկոսութիւնը որ էջմիածնէն աւելի ազատութիւն կը վայելէր պէտք էր որ զոյութիւնը պահէր քանի որ զըլխաւորաբար լեռնային Հայաստանի օգտակար կը հանդիսանար :

«Վեցերորդ՝ զի յայտնապէս զկահա եւ զարդիւնս սուրբ աթոռոյս՝ եթէ ըզպաշտելի զուրբ խաչ եւ թէ զսկիհ եւ թէ զանօթ մեռոնի սրբոյ եւ զամին նման այլ եւս բազմադիմի անօթս եկեղեցւոյ՝ զոսկեղէն եւ զարծաթեղէնն՝ խորտակեալ եւ ի քրայս հալոցաց արկեալ, զանունն Քրիստոսի ջնջելով՝ զարալի ալի զրէ :»

Այս ամբաստանութիւնը առարկելի է : Էջմիածին, ինչպէս նաեւ մեր միւս եկեղեցիները, ամէն տեղ սովորութիւն ըրած էին անգործածելի, կոտրած կամ անյարմար համարուած եկեղեցական արծաթ եւ ոսկի իրերը հալեցնել, վերըստին գործածելու համար : Եթէ այսօր Էջմիածնայ մէջ ԺԸ. դարէն առաջ չինուած հազուադիւս իրեր չկան, բնական է ատոր յանցանքը Յակոբ Զուղայեցիինը չէ : Օրինակ քանի մը տարի առաջ ինծի առաջարկուեցաւ զրեթէ զուտ ոսկիէ բաւական խոշոր եւ շատ ընտիր գործուած տուփ մը, Անգլիոյ մէջ Հրեայ հնավաճառէ մը : Տուփը ունէր ընտիր արձանագրութիւն մը եւ շատ գեղեցիկ գործըւածք : Յիշատակարանը ցոյց կուտար որ չինուած էր Եղիազար Այնթապցիի ապրապրանքով : Անտարակոյս այս տուփին Էջմիածին չգտնուելուն պատասխանատուութիւնը չենք կրնար Յակոբ Դ.ին վերադրել :

Նմանապէս ոչ մէկ սպացոյց ունինք յաջորդ ամբաստանութեանց համար եւս : Ասոնք պարզապէս անմիտ բամբասանքներ կրնանք նկատել : Այսուհանդերձ՝ իրենց կարգին, կը ներկայացնենք զանոնք :

«Եւթներորդ՝ զՓիլիպպոս հոգեւորտիրի զամենայն արդիւնս յիշատակացն հետամոյր կորոյս, եւ զնորին քարոզգրքի յիշատակարան երկու թուղթսն եհատ : (Գրչադրեալ Քարոզգրքէ մը յիշատակարանը կտրել հանելը կրնանք ռեւէ մէկուն համար այսպանելի նկատել,

եւ սակայն երբեք չի նշանակեր «զամենայն արդիւնս յիշատակացն հետամոյր կորոյս», այսինքն Փիլիպպոս կաթողիկոսին բոլոր յիշատակութիւնները անհետ կորսնցնել :)

Ութերորդ՝ զի ընդդէմ կանոնաց սրբոց՝ վասն նախանձու եւ վասն կաշառակութեան իւրոյ՝ զեպիսկոպոսունս փոխակերպելով, եւ ի միում ամի եւ միոյ աթոռոյ երկիցս եւ երից եպիսկոպոսունս ձեռնադրէ եւ փոփոխէ զնոսա : Իններորդ՝ զի եւ զվասն նոցին եպիսկոպոսաց կողոպտելով զփոխելոց եպիսկոպոսացն կամ թէ զվախճանելոցն զարդիւնսն ամենայն բռնութեամբ առ ինքն ամփոփէ : (Չարմանալի է որ Ոնտփրիոս, որ անուններ գործածելէ երբեք չի քաշուիր, ոչ մէկ անուն կը յիշատակէ այս ամբաստանութիւնները հաստատելու համար : Նոյնը նաեւ յաջորդ ամբաստանութեան համար :)

Տասներորդ՝ զի անխտրաբար զկանամբ եղեալ երիցունս զոմանս եպիսկոպոս ձեռնադրէ եւ ոմանց վարդապետական իշխանութիւն տայ : Մետասներորդ՝ զի վարդապետական կարգն զմիանգամ ընկաւեալն յայլոց վեհափառ վարդապետացն անընդունակ համարեալ՝ ինքն ամփոփէ : Երկուտասներորդ՝ զի ըզսրբալոյս մեռոնն, որ աւանդեցաւ մեկ յաւուր աւազ հինգշաբթի օրհնել ըստ կանոնաց սրբոց, սա զնոյն արհամարհելով՝ յորում աւուր եւ կամ ի լուր եւ ի տէրունի օրհնէ զմեռոնն : Երեքտասներորդ՝ զի զնըւիրակս սրբալոյս մեռոնին կապալատու արարեալ՝ նոքօք զամենայն աշխարհ ձանձրացուցանէ վասն հարկին եւ զկարգ եկեղեցոյ խանդարէ : Չորեքտասներորդ՝ զի զարս զոհհիկս եւ աշխարհիկս, ի վերայ սուրբ աթոռոյս արդեանցն եւ պաղոցն վերակացու կացուցեալ՝ զլափլիզութենէ նոցին ի տունս իւրեանց ամբարելոցն անփոյթ առնէ, եւ այլեւս աւելիս ինքնին ձեռօք իւրովք ազատոհմից իւրոց եւ եղբորորդեացն ցրուէ, նա՛ եւս զնախեղուտ անուն զիւզն, որ բազում ծախիւք ի վերայ սուրբ աթոռոյն սեպհականեալ էր ի սկզբանէ, զնա եւս ի վերայ եղբորորդւոյն իւրոյ կապալատու արար : Հընգետասներորդ՝ զի բողոք աղաղակի մե-